

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1 0
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2017թ. նոյեմբերի 30-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. Ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփում:
Ձեկուցող՝ ասպիրանտուրայի բաժնի վարիչ Ն.Ղազարյան
2. Ասպիրանտուրայի 2017 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում
Ձեկուցող՝ ասպիրանտուրայի բաժնի վարիչ Ն.Ղազարյան
3. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփում
Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ Չատինյան
4. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփում
Ձեկուցող՝ Ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան
5. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Թամարա Զավենի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
Ձեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
6. Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Նունե Սերգեյի Ջումարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
Ձեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
7. Ակադեմիայի ուսանողական գիտական ընկերության կանոնադրության հաստատման հարցը
Ձեկուցող՝ իրավախորհրդատու Գայանե Հովհաննիսյան
8. Ընթացիկ հարց: Լիլիա Արեգի Հակոբյանին ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:
Ձեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան
9. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչի ընտրության հարցը:
Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
10. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի վարիչի ընտրության հարցը:
Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
11. Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչի ընտրության հարցը:
Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
12. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի վարիչի ընտրության հարցը:
Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
13. Ընթացիկ հարց: Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ընտրության հարցը:
Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

1. **Լսեցին՝** Ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ ասպիրանտուրայի բաժնի վարիչ Ն.Ղազարյան

Ձեկուցողը ներկայացրեց ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ն.Ղազարյանը:

Որոշեցին՝ Ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝** Ասպիրանտուրայի 2017 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ ասպիրանտուրայի բաժնի վարիչ Ն.Ղազարյան:

Ձեկուցողը ներկայացրեց ասպիրանտուրայի 2017 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքների հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Այվազյանը, Ն.Ղազարյանը:

Որոշեցին՝ Ասպիրանտուրայի 2017 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝** Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Գ Չատինյան

Ձեկուցողը ներկայացրեց, որ 2017-2018 ուսումնական տարվա մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելության քննություններին դիմել են են 138 հոգի, որոնցից մրցույթը հաղթահարել են 130-ը, ընդ որում՝ հանրային կառավարում՝ 23 հոգի, պետական կառավարում և տեղական ինքնակառավարում՝ 6 հոգի, հանրային ֆինանսների կառավարում՝ 13 հոգի, իրավագիտություն՝ 39 հոգի, քաղաքագիտություն՝ 17 հոգի, կառավարման հոգեբանություն՝ 12 հոգի, ապահովագրական գործ՝ 8 հոգի, , Զբոսաշրջության կառավարում՝ 7 հոգի, քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ՝ 5 հոգի: Առկայից հեռակա են տեղափոխվել թվով 11 հոգի, ընդ որում՝ հանրային կառավարում՝ 2 հոգի, պետական կառավարում և տեղական ինքնակառավարում՝ 2 հոգի, հանրային ֆինանսների կառավարում՝ 3 հոգի, իրավագիտություն՝ 1 հոգի, քաղաքագիտություն՝ 1 հոգի, քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ՝ 2 հոգի: Ընդհանուր առմամբ հեռակա ուսուցման համակարգում ընդունվել են 141 հոգի (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Լ.Զիլֆուղարյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝** Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ Ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

Ձեկուցողը ներկայացրեց մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը, Գ.Չատինյանը

Որոշեցին՝ Մազիստրատուրայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքները գնահատել բավարար:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Թամարա Ջավենի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Ձեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Ձեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 2017թ. նոյեմբերի 22-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է հայցորդ Թամարա Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը: Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝ Թամարա Ջավենի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հարկային ծառայողի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերահաստատել «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» վերտառությամբ:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը, Գ.Չատինյանը:

Որոշեցին՝ Թամարա Ջավենի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» վերտառությամբ:

6. Լսեցին՝ Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Նունե Սերգեյի Ջոմարոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Ձեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Ձեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 2017թ. նոյեմբերի 22-ին կայացած ամբիոնի նիստում (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը) քննարկվել է Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Նունե Սերգեյի Ջոմարոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը: Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝ Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Նունե Ջոմարոյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Սոցիալական պետության սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին:

Արտահայտվեցին՝ Գ.Չատինյանը, Ա.Եզեկյանը:

Որոշեցին՝ Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Նունե Ջոմարոյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Սոցիալական պետության սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին:

7. Լսեցին՝ Ակադեմիայի «Ուսանողական գիտական ընկերության կանոնադրության» հաստատման հարցը:

Ձեկուցող՝ իրավախորհրդատու Գայանե Հովհաննիսյան

Ձեկուցողը ներկայացրեց Ուսանողական գիտական ընկերության կանոնադրության հիմնական դրույթները:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը, Հ.Ստեփանյանը:

Որոշեցին՝ Հաստատել Ակադեմիայի «Ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն»-ը:

8. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Լիլիա Արեգի Հակոբյանին ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

Ջեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան:

Հ.Ստեփանյանը նշեց, որ Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Լիլիա Արեգի Հակոբյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին:

Լիլիա Հակոբյանը 2007թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է 11 գիտական հոդված՝ որոնցից 4-ը՝ համահեղինկությամբ, թվով 7 դասախոսությունների շարք՝ համահեղինակությամբ՝ հեղինակային հրատարակություն, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ:

Լիլիա Հակոբյանը 2012-2015 թթ Ակադեմիայում աշխատում է որպես Իրավագիտության ամբիոնի դոցենտ, իսկ 2015 թվականից առ այսօր ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդում է «Համեմատական սահմանադրական իրավունք» առարկան՝ ժամավճարային հիմունքներով:

Արտահայտվեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանը նշեց, որ Լիլիա Հակոբյանը որպես ամբիոնի դասախոս ակտիվորեն մասնակցում է ամբիոնում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներին:

Այնուհետև ակադեմիայի գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը մատնանշեց, որ Լ.Հակոբյանն իր աշխատանքն իրականացնում է բարեխղճորեն և արժանի է հայցվող գիտական կոչմանը, ուստի առաջարկեց իրականացնել գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Արտակ Բաղդասարյան՝ անդամ
3. Գայանե Հովհաննիսյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 1 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝

1. Հիմք ընդունելով գիտական խորհրդի նիստի գաղտնի քվեարկության արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներից 21-ը, որից ներկայացված հարցին կողմ են քվեարկել՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 0) և հաշվի առնելով, որ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Լիլիա Հակոբյանի կատարած գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի

Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ>>-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին՝ Լիլիա Արեգի Հակոբյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ԺԲ.00.02 Հանրային իրավունք մասնագիտությամբ:

2. Միջնորդել ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ հաստատելու սույն որոշումը:

9. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Ձեկուցողը ներկայացրեց, որ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու նպատակով դիմել է քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մամիկոնի Մարգարյանը (կից ներկայացվում մանդատային հանձնաժողովի եզրակացությունը): Այնուհետև Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչի թեկնածու Մարիամ Մարգարյանը հակիրճ ներկայացրեց ամբիոնի զարգացման ծրագիրը:

Արտահայտվեցին՝ Գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը առաջարկեց իրականացնել փակ գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Արտակ Բաղդասարյան՝ անդամ
3. Գայանե Հովհաննիսյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 2 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝

Հիմք ընդունելով «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի 31-րդ կետը և գիտական խորհրդի նիստի գաղտնի քվեարկության արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներից 21-ը, որից ներկայացված հարցին կողմ են քվեարկել՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 0) **Մարիամ Մարգարյանն** ընտրվել է Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ:

10. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Ձեկուցողը ներկայացրեց, որ Կառավարման ամբիոնի վարիչի ընտրությանը մասնակցելու համար դիմել է մեկ թեկնածու, սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը ինքնաբացարկ է հայտնել և հրաժարվել մասնացել մրցույթին:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Ա.Սարիբեկյանը, Խ. Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Համաձայն «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի 4-րդ կետ՝ հայտարարել Կառավարման ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթ:

11. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողը ներկայացրեց, որ Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու նպատակով դիմել է հոգեբանության թեկնածու, պրոֆեսոր Ռուբեն Վազգենի Ադուզումցյանը (կից ներկայացվում մանդատային հանձնաժողովի եզրակացությունը): Այնուհետև Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչի թեկնածու Ռուբեն Ադուզումցյանը հակիրճ ներկայացրեց ամբիոնի զարգացման ծրագիրը:

Արտահայտվեցին՝ Գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը առաջարկեց իրականացնել փակ գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Արտակ Բաղդասարյան՝ անդամ
3. Գայանե Հովհաննիսյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 3 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝ Հիմք ընդունելով «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի 31-րդ կետը և գիտական խորհրդի նիստի գաղտնի քվեարկության արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներից 21-ը, որից ներկայացված հարցին կողմ են քվեարկել՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 0) **Ռուբեն Վազգենի Ադուզումցյանն** ընտրվել է Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ:

12. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողը ներկայացրեց, որ Իրավագիտության ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու նպատակով դիմել է իրավագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Ռևիկի Եզեկյանը (կից ներկայացվում մանդատային հանձնաժողովի եզրակացությունը): Այնուհետև Իրավագիտության ամբիոնի վարիչի թեկնածու Արմեն Եզեկյանը հակիրճ ներկայացրեց ամբիոնի զարգացման ծրագիրը:

Արտահայտվեցին՝ Գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը առաջարկեց իրականացնել փակ գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Արտակ Բաղդասարյան՝ անդամ
3. Գայանե Հովհաննիսյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 4 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝ Հիմք ընդունելով «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի 31-րդ կետը և գիտական խորհրդի նիստի գաղտնի քվեարկության

արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներից 21-ը, որից ներկայացված հարցին կողմ են քվեարկել՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 0) **Արմեն Ռևիկի Եզեկյանն** ընտրվել է Իրավագիտության ամբիոնի վարիչ:

13. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ընտրության հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողը ներկայացրեց, որ Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու նպատակով դիմել է տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արմենակ Յուրիկի Այվազյանը** (կից ներկայացվում մանդատային հանձնաժողովի եզրակացությունը): Այնուհետև Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի թեկնածու Արմենակ Այվազյանը հակիրճ ներկայացրեց ամբիոնի զարգացման ծրագիրը:

Արտահայտվեցին՝ Գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը առաջարկեց իրականացնել փակ գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Արտակ Բաղդասարյան՝ անդամ
3. Գայանե Հովհաննիսյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 4 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝ Հիմք ընդունելով «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի ընտրության կարգ»-ի 31-րդ կետը և գիտական խորհրդի նիստի գաղտնի քվեարկության արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներից 21-ը, որից ներկայացված հարցին կողմ են քվեարկել՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 0) **Արմենակ Յուրիկի Այվազյանն** ընտրվել է Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան
30 նոյեմբերի 2017թ.

Կ.Տ.